Տեղեկատու թիվ 04 (ապրիլ2022թ.)
Newsletter N 04

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

Հայ դատի ամփոփագրեր

ապրիլի 1-15

ապրիլի 15-30

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

Բայդենի այս որոշումը կապ չունի Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմի մասին Հայաստանի կամ Ամերիկայի հայկական կազմակերպությունների դիրքորոշման հետ

Վերջերս Ամերիկայի Հայ դատի վաշինգտոնյան գրասենյակը տեղեկացրեց, որ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը կիսով չափ կրճատել է ավելի վաղ իր ստորագրած $45 միլիոն դոլարի օգնությունը Հայաստանին և չեղարկել է Արցախին ականազերծման համար տրամադրվելիք $2 միլիոնը: Կատարվածի մասին պարզաբանումներ ստանալու

նպատակով Iragir.am-ը զրուցել է ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի մամուլի քարտուղար Էլիզաբեթ Չուլջյանի հետ:

Text Link

ANCA hosts meeting between California and Armenia Legislators

The Armenian National Committee of America (ANCA) hosted a meeting on Saturday with California Assembly member Chris Holden and visiting Armenia Member of Parliament Arthur Khachatryan to discuss a variety of issues of concern for the Armenian American community and to discuss the latest situation in Armenia, Artsakh and especially the Syunik province.
Earlier this year Asm. Holden spearheaded an effort to establish a sister state relationship between California and the province of Syunik in Armenia.
Present at the meeting were ANCA Greater Crescenta Valley Chapter chair Dr. Alice Chalian, ANCA San Fernando Valley East Chapter chair and Sherman Oaks Neighborhood Council member Dr. Avo Babian, ANCA National Board member and ANCA Pasadena chapter rep. Aida Dimejian, ANCA National Board Member Zanku Armenian, and Dr. Arman Karapetyan.

Text Link

ANCA Backs Armenian Genocide Education Act



The Armenian National Committee of America (ANCA) welcomed news that Representatives Carolyn Maloney (D-NY) and Gus Bilirakis (R-FL) are introducing the Armenian Genocide Education Act, a bipartisan measure – advanced in the wake of official U.S. Congressional and Presidential recognition of this crime – to fund Library of Congress educational programs about the history, lessons, consequences, and ongoing costs of the Armenian Genocide.

This landmark legislation – strongly supported by the ANCA – seeks to provide $10 million in funding over five years for the Library of Congress to educate Americans about Ottoman Turkey's systematic and deliberate state-sponsored mass murder, national dispossession, cultural erasure, and exile of millions of Armenians, Greeks, Assyrians, Chaldeans, Syriacs, Arameans, Maronites, and other Christians, between 1915 and 1923.

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբն աշխատում է Հայոց ցեղասպանության ուսուցման համար 10 միլիոն դոլար ապահովելու ուղղությամբ

ԱՄՆ Կոնգրեսականներ Քերոլին Մալոնին և
Գուս Բիլիրակիսը Կոնգրեսում ներկայացրել են

Հայոց ցեղասպանության ուսուցման վերաբերյալ երկկուսակցական օրինագիծ՝ հաշվի առնելով Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը ԱՄՆ Կոնգրեսի և նախագահի կողմից։



Հիմնվելով Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման զույգ բանաձևերի վրա՝ օրինագծի նպատակն է առաջիկա հինգ տարիների ընթացքում 10 միլիոն դոլար հատկացնել Կոնգրեսի գրադարանին՝ Հայոց ցեղասպանության պատմության, դասերի, հանգամանքների և դրա ներկա դրսևորումների վերաբերյալ կրթական ծրագրեր իրականացնելու համար։
Մասնավորապես, կրթական ծրագրերը պետք է անդրադառնան Օսմանյան Թուրքիայի կողմից դիտավորյալ ծրագրավորված և պետական հովանավորչությամբ իրականացված՝ հայերի, հույների, ասորիների, սիրիացիների, քաղդեացիների, արամեացիների, մարիոնիտների և քրիստոնյա այլ փոքրամասնությունների զանգվածային սպանություններին, տեղահանություններին և մշակութային ժառանգության բնաջնջմանը 1915-1923 թթ։

Text Link

LAUSD reaffirms its commitment to teaching Armenian Genocide

The Los Angeles Unified School District Board of Education unanimously passed a resolution on Tuesday brought by Board President Kelly Gonez, LAUSD School Board President – recognizing April 2022 as the commemoration of the Armenian Genocide of 1915 and reaffirming its commitment to teaching Armenian Genocide.
LAUSD has for years served as a model for other school districts to follow as it pertains to the proper recognition and teaching of the Armenian Genocide. We are grateful to President Gonez and all the co-sponsors who made today's resolution possible and look forward to our continued partnership in providing resources to teachers to pass on to future generations.

Text Link

Հայոց Ցեղասպանությունը կդասավանդվի ԱՄՆ-ի դպրոցներում ու բուհերում. մանրամասներ՝ Եղիսաբեթ Չուլջյանից

«Կարող ենք ընդլայնել Հայոց Ցեղասպանության ուսուցումը երկրի չորս կողմը։ Ամերիկայի մեջ մինչև Հայկական Ցեղասպանության ճանաչումը դաշնակցային մակարդակի վրա և նախագահի ճանաչումը 49 նահանգ տարբեր մակարդակներով Հայկական Ցեղասպանությունը ճանաչել են։ Դրանց կողքին մոտ 12 նահանգ արդեն որոշում են որդեգրել, որ Հայկական Ցեղասպանությունն ուսուցվի իրենց նահանգների մեջ։ Բայց մենք պետք է ընդայնենք այդ թիվը մինչև 50 նահանգների, և շատ կարևոր քայլ է հասցնելու դասավանդման մեթոդները, որպեսզի ուսուցիչներն այդ միջոցը ունենան շիտակ ձևով դասավանդելու ոչ միայն հայկական Ցեղասպանության պատմությունը, այլև դրա ներկա հետևանքները»,-ասաց Էլիզաբեթ Չուլջյանը։

Text Link

ANCA Supporters Salute U.S. Senator Robert Menendez for

Bold Pro-Artsakh Leadership; Championing Senate Armenian Genocide Recognition

Armenian National Committee of America (ANCA) leaders gathered with friends and supporters to honor U.S. Senate Foreign Relations Committee Chairman Robert Menendez (D-NJ) – a decades-long champion of Armenian American concerns, who led the historic 2019 battle to secure unanimous U.S. Senate recognition of the Armenian Genocide and continues his unwavering support for Armenia's security and Artsakh's freedom. Chairman Menendez has had strong ties to the ANC of New Jersey for decades and consistently receives an "A+" rating on the ANCA Congressional Report Card. "Senator Menendez's bold leadership and principled defense of human rights and American values have been a hallmark of his service in the House and Senate," said ANCA Chairman Raffi Hamparian. "The ANCA has been with him every step of the way and looks forward to our continued work together."

Text Link

Armenian Genocide Education Act Introduced in U.S. House



Representatives Carolyn Maloney (D-NY) and Gus Bilirakis (R-FL) were joined by over 45 U.S. Representatives in introducing the Armenian Genocide Education Act, an ANCA-backed bipartisan measure that would fund Library of Congress educational programs about the history, lessons, consequences, and ongoing costs of the Armenian Genocide.
"As the saying goes, if we do not learn from history, we are doomed to repeat it," said Congresswoman Maloney. "That is why I am proud to introduce the Armenian Genocide Education Act to teach the horrors and lessons of the Armenian Genocide accurately and effectively. Both chambers of Congress voted with overwhelming bipartisan majorities to officially recognize the Armenian Genocide, and last year President Biden made it clear that it is the official position of the United States that these systematic killings were genocide. It is imperative that we now ensure Americans have access to the resources they need to learn and teach about this atrocity."

Text Link

Հայոց ցեղասպանության դասավանդման նախագիծը ներկայացվեց ԱՄՆ Կոնգրեսում



Ապրիլի 21-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ներկայացվել է Հայոց ցեղասպանության դասավանդման համար Կոնգրեսի գրադարանին 10 միլիոն դոլար հատկացնելու նախագիծը, որն առաջ էր մղվում Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կողմից։ Վերջինիս ջանքերով Ներկայացուցիչների պալատի առավել քան հիսուն անդամներ միացել էին նախաձեռնությանը, որը ներկայացվել էր կոնգրեսականներ Ք. Մալոնիի և Գ. Բիլիրակիսի կողմից։
Օրենսդրական նախաձեռնությունը ենթադրում է տասը միլիոն դոլարի հատկացում Կոնգրեսի գրադարանին՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում Օսմանյան Թուրքիայում պետական բարձրագույն մակարդակում ծրագրված և իրականացված զանգվածային

սպանությունների, տեղահանության, մշակութային բնաջնջման, ինչպես նաև հայերի, հույների, ասորիների, սիրիացիների, արամեացիների և մարոնիտների աքսորի վերաբերյալ ամերիկացիներին կրթելու համար։

Text Link

President Biden Must Transform Armenian Genocide Recognition into Concrete Action


BRIEFING ROOM

Statement by President Joe Biden on Armenian Remembrance Day

APRIL 24, 2022 • STATEMENTS AND RELEASES

On April 24, 1915, Ottoman authorities arrested Armenian intellectuals and community leaders in Constantinople. Thus began the Armenian genocide—one of the worst mass atrocities of the 20th century. Today, we remember the one and a half million Armenians who were deported, massacred, or marched to their deaths in a campaign of extermination, and mourn the tragic loss of so many lives.

As we reflect on the Armenian genocide, we renew our pledge to remain vigilant against the corrosive influence of hate in all its forms. We recommit ourselves to speaking out and stopping atrocities that leave lasting scars on the world. And, as we mourn what was lost during the Meds Yeghern, let us redouble our efforts toward healing and building the better, more peaceful world that we wish for our children. A world where human rights are respected, where the evils of bigotry and intolerance do not mark our daily lives, and where people everywhere are free to pursue their lives in dignity and security.

This is also a moment to reflect on the strength and resiliency of the Armenian people. After enduring a genocide, the Armenian people were determined to rebuild their community and their culture, so often in new homes and new lands, including the United States. Armenian Americans are a vital part of the fabric of the United States. They make our nation stronger and more dynamic, even as they continue to carry with them the tragic knowledge of what their ancestors endured. We recognize their pain and honor their story.

Today, 107 years later, the American people continue to honor all Armenians who perished in the genocide.

###



A year after President Biden rejected Turkey's gag-rule on honest U.S. remembrance of the Armenian Genocide, Armenian Americans look for concrete U.S. action to secure justice for this crime and prevent a second genocide resulting from Turkey and Azerbaijan's ongoing threats and attacks against Armenia and Artsakh, reported the Armenian National Committee of America (ANCA).
President Biden's second Armenian Remembrance Day statement – issued on April 24th, the international day of remembrance of this crime – once again mourned the "one and a half million Armenians who were deported, massacred, or marched to their deaths in a campaign of extermination." The statement continued, "As we reflect on the Armenian genocide, we renew our pledge to remain vigilant against the corrosive influence of hate in all its forms. We recommit ourselves to speaking out and stopping atrocities that leave lasting scars on the world."
ANCA Executive Director Aram Hamparian stated, "In the year since President Biden first joined Congress in commemorating the Armenian Genocide, he has approved continued U.S. military aid to Azerbaijan – U.S. taxpayer-funded assistance that materially strengthens and morally emboldens an oil-rich dictatorship hell-bent on completing this crime against the Armenian homeland, a landlocked, blocked genocide-survivor state."

Text Link

Նախագահ Բայդենը պետք է Հայոց ցեղասպանության ճանաչումից անցնի կոնկրետ գործողությունների. Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

Նախագահ Բայդենի կողմից Հայոց ցեղասպանության մասին ամենամյա ուղերձի առիթով հայտարարություն է տարածել Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, որի հիմնական մասը ներկայացնում ենք ստորև։
«Նախագահ Բայդենի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո ամերիկահայերն ակնկալում են Միացյալ Նահանգներից կոնկրետ քայլեր՝ Հայոց ցեղասպանության համար արդարություն ապահովման և երկրորդ ցեղասպանությունը կանխելու համար, որը բխում է Հայաստանի դեմ Թուրքիայի և Ադրբեջանի շարունակական սպառնալիքներից և հարձակումներից։ Անդրադառնալով նախագահ Բայդենի հայտարարությանը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Նախագահ Բայդենը, Կոնգրեսին առաջին անգամ միանալուց և Հայոց ցեղասպանությունը ոգեկոչելուց հետո, հաստատել է ԱՄՆ-ի շարունակական ռազմական օգնությունն Ադրբեջանին։ ԱՄՆ հարկատուների կողմից ֆինանսավորվող օգնությունը նյութապես ուժեղացնում և բարոյապես քաջալերում է նավթով հարուստ բռնապետական դժոխքը, որը հակված է ավարտին հասցնելու ցեղասպանությունը հայկական պետության նկատմամբ։ Նախագահ Բայդենի գրառումը, ցավոք, արտացոլում է ցեղասպանության ճանաչման տառը, բայց ոչ իրական ոգին։ Ոչ մի առարկայական ճնշում Թուրքիայի վրա՝ հաշվի առնելու իր այսօրվա պարտականությունները, ոչ մի հակազդեցություն Արցախի դեմ Ադրբեջանի ցեղասպանական բռնությանը, ոչ մի ուժային հակազդեցություն Անկարայի կողմից այս հանցագործության շարունակական ժխտման նկատմամբ, ոչ մի ակտիվ աջակցություն Հայոց

ցեղասպանության վերաբերյալ ԱՄՆ կրթական ծրագրերին: Նա կարող է և պարտավոր է ավելին անել»:

Text Link

ANCA calls on Congress to halt military aid to Azerbaijan, expand aid to Artsakh and Armenia

Government Affairs Director Tereza Yerimyan outlined the Armenian National Committee of America's (ANCA) policy priorities in testimony submitted today to the US House panel drafting the FY23 foreign aid bill – with a sharp focus on ending all US military aid to Azerbaijan and delivering an urgently needed $50 million aid package to Artsakh.
In testimony submitted to Chairwoman Barbara Lee (D-CA) and Ranking Member Hal Rogers (R-KY) of the House Appropriations Subcommittee on State-Foreign Operations, Yerimyan made the case that, in the wake of Azerbaijan's ethnic cleansing of Artsakh (Nagorno Karabakh) and amid Baku's ongoing occupation of sovereign Armenian territory, the Congress should hold the Aliyev regime accountable by cutting off all US military aid to its armed forces. She also pressed for a long-term developmental investment in Artsakh, to help its families "rebuild their lives and resettle in safety upon their indigenous Armenian homeland."

Text Link

ANCA Welcomes Growing Congressional Calls to Zero-Out U.S. Military Aid to Azerbaijan



A bipartisan group of 64 U.S. Representatives called on leaders of the House Appropriations Committee to stop military aid to Azerbaijan and allocate $150 million for Artsakh and Armenia to address the ongoing humanitarian and security crises caused by the Erdogan and Aliyev regimes, reported the Armenian National Committee of America (ANCA).
"We stand with the 64 Congressional cosigners of the Armenian Caucus FY 2023 Foreign Aid letter in calling for robust U.S. aid to Artsakh and Armenia, to counter Azerbaijan's ongoing attacks and provide life-changing assistance to the 100,000 Armenians displaced from their ancestral Artsakh homes during the 2020 war," said ANCA Executive Director Aram Hamparian. "We will continue to work with House and Senate appropriators in the upcoming months to ensure that no U.S. tax dollars are used to aid and abet Turkey and Azerbaijan's genocidal policies."

Text Link

Ամերիկյան 64 կոնգրեսականներ միացել են Ադրբեջանին ռազմական օժանդակությունից զրկելու և Հայաստանին ու Արցախին 150 միլիոն դոլար հումանիտար օժանդակություն տրամադրելու նախագծին

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի
թվով 46 անդամներ ապրիլի 28-ին նամակով

դիմել են հատկացումների հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով դադարեցնել Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան ռազմական օժանդակությունը և 150 միլիոն դոլար հատկացնել Հայաստանին ու Արցախին, որպեսզի վերջիններս դիմագրավեն Ադրբեջանի և Թուրքիայի կողմից հարուցված հումանիտար և անվտանգային ճգնաժամերը: Այս երկու ուղղությունները Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի հիմնական քաղաքական առաջնահերթություններից են, որոնց իրականացման համար տևական ժամանակահատված աշխատանք է իրականացվում նաև ԱՄՆ-ում գործող այլ ժողովուրդների համայնքային կազմակերպությունների ներգրավմամբ: Մեկնաբանելով բավական մեծ թվով կոնգրեսականների միացումը հիշյալ նախաձեռնությանը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Մենք կանգնած ենք Կոնգրեսի 64 անդամների կողքին, ովքեր 2023թ. ֆիսկալ տարվա համար կոչ են անում բավական ազդու օգնություն ցուցաբերել Արցախին և Հայաստանին, հակազդել Ադրբեջանի շարունակվող հարձակումներին և իրապես փոխել շուրջ 100.000 հայերի կյանքի որակը: Մենք առաջիկա ամիսներին կշարունակենք աշխատել Ներկայացուցիչների պալատի և Սենատի անդամների հետ, որ ամերիկյան հարկատուների գումարները չօգտագործվեն Թուրքիայի և Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությանն օգնելու և աջակցելու համար»:



Text Link

Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

Փաշինյան-Ալիև հանդիպմանն ընդառաջ Եվրախորհրդարանի 43 պատգամավոր նամակ է հղել Շառլ Միշելին

Եվրախորհրդարանի պատգամավորներ՝ Լուկաս Ֆուրլասի և Ֆրանսուա-Քսավյե Բելամիի նախաձեռնությամբ 43 Եվրապատգամավոր բոլոր գլխավոր քաղաքական խմբակցություններից նամակ է հղել Եվրոպայի Խորհրդի նախագահ Շառլ Միշելին և Եվրոպայի Արտաքին գործողությունների ծառայության Բարձր Ներկայացուցիչ Ժոզեփ Բորրելլին՝ Բրյուսելում Փաշինյան-Ալիև հանդիպմանն ընդառաջ:
Եվրապատգամավորները ահազանգում են Արցախում Ադրբեջանի կողմից բնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացվող էթնիկ զտման քաղաքականության վերաբերյալ: Նրանք ԵՄ գործադիր ղեկավարներին կոչ են անում օգտագործել Եվրամիության տրամադրության տակ գտնվող բոլոր լծակները ՝ Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու համար, որպեսզի այդ երկիրը վերջ տա Արցախում իր ագրեսիվ քաղաքականությանը, անհապաղ հետ քաշի իր զինված ուժերը ելման դիրքեր և դադարեցնի ցանկացած գործողություն, որը կարող է վտանգել Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչության անվտանգությունն ու բարեկեցությունը:

Text Link

43 MEPs sent letter to Charles Michel, alerting about Azerbaijan’s policy of ethnic cleansing in Nagorno Karabakh/Artsakh

On the initiative of the Members of the European Parliament (MEP) François-Xavier Bellamy and Loucas Fourlas, 43 MEPs from all the major political groups addressed a letter to President of the European Council Charles Michel and the High Representative of the European Union for Foreign Affairs and Security Policy Joseph Borrell, ahead of the Pashinyan-Aliyev meeting in Brussels.
MEPs express their concerns about Azerbaijan's policy of ethnic cleansing against the native Armenian population of Nagorno Karabakh/ Artsakh. They urge the EU leadership to use all available leverage to pressure Azerbaijan to stop its aggressive policy in Artsakh, immediately withdraw its military forces back to their initial positions and stop any action that could endanger the indigenous Armenian population of Nagorno-Karabakh.

Text Link

Հայերի էթնիկ զտումներն Ադրբեջանում դադարեցնելու մասին նամակը Եվրոպայի Հայ դատի հաջող աշխատանքներից էր. Գասպար Կարապետյան

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը Yerkir.am-ի հետ հարցազրույցում հիշեցրեց, որ մոտ 10 օր առաջ ընդունված բանաձևում Եվրախորհրդարանը Ադրբեջանին կոչ էր անում չքանդել հայկական կոթողները, և առաջին անգամ խոսում էր հայատյացության մասին։
«Դա կարծր բանաձև էր Ադրբեջանի համար։ Այդ աշխատանքը, հիմնականում, արեց ՀՅԴ Հայ Դատի գրասենյակը և Բրյուսելում ՀՀ ներկայացուցչությունը։ Նամակի հարցն այլ է. դա ուղղակիորեն Եվրախորհրդարանի պատգամավորների հետ ենք աշխատել։ Աշխատանքն սկսեցինք երկու եվրապատգամավորի հետ՝ մեկը Լուկաս Ֆուրլասն է Կիպրոսից, որը նաև Եվրախորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի նախագահն է, մյուսը՝ Ֆրանսուա-Քսավյե Բելամին Ֆրանսիայից, որը նույնպես մեզ հետ շատ մոտ է և ամեն առիթով մեզ զորակցում է»,-ասաց Գասպար Կարապետյանը։
Նա նշեց, որ ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործադիր տնօրեն Հեղինե Էվինյանի պատրաստած նամակի պատճենն ուղարկել են երկու պատգամավորին էլ, որոնք էլ դա ուղարկել են իրենց գործընկերներին, որ ստորագրություններ հավաքվեն։ Ժամանակը շատ կարճ է եղել. ընդամենը 2 օրում են 43 ստորագրություն հավաքել։

Text Link

«Ապրիլի 24-ը պետք է դառնա աննկուն պայքար ու անկոտրում կամք խորհրդանշող օր», ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի Հանձնախումբ

Ապրիլ 24-ին աշխարհի բոլոր անկյուններում ոգեկոչում են Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը և մատուցում հարգանքի տուրք։ Ցավոք, 107 տարի անց ցեղասպանության հետևանքները շարունակում են վտանգել հայության հավաքական գոյությունը, ինչպես նաև խաթարել Հայաստանի Հանրապետության անվտանգությունը։ Գրեթե մեկ դար անց, ողջ Արևմտյան Հայաստանի կորստից հետո մենք կրկին

կանգնած են հայրենազրկման լրջագույն վտանգի առաջ։
Թուրք-ադրբեջանական տանդեմի ուղղակի թիրախն Արցախն է՝ մեր հայրենիքի այն հատվածը, ուր մեր արմատներն ունեն 3000 տարվա պատմություն, ուր հայոց ինքնիշխանությունը կանգուն է եղել նույնիսկ ամենադժվարին ժամանակահատվածում։ Սակայն հստակ է, որ ըստ էության, թուրք-ադրբեջանական տանդեմի գլխավոր նպատակը Հայաստանի Հանրապետությունը հնարավորինս թուլացնելն է։ Սա ևս մեկ անգամ փաստում է, որ անպատիժ մնալու դեպքում ոճրագործը կրկնում է իր արարքը։ Թուրքիայի իշխանությունները ոչ միայն շարունակում են ժխտել Հայոց ցեղասպանությունը, այլն նաև 44-օրյա պատերազմի ընթացքում իրենց գործուն մասնակցությունն ունեցան Ադրբեջանի կողմից Արցախում բնիկ հայ բնակչության նկատմամբ էթնիկ զտում իրականացնելու մեջ։

Text Link

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Գանատայի ծերակոյտի անդամ Լէօ Հուսաքոս կը դատապարտէ Արցախի դէմ ուղղուած ատրպէյճանական սադրանքները

Մարտ 30-ին կայացած Գանատայի Ծերակոյտի հերթական նիստին ելոյթ ունեցաւ Ծերակոյտի ընդդիմադիր Պահպանողական խմբակցութեան ղեկավար Լէօ Հուսաքոսը եւ իր զեկոյցի ընթացքին խստօրէն դատապարտեց Արցախի դէմ որդեգրուած արտպէյճանական յարձակողապաշտ ընթացքը։ Այս մասին կը հաղորդէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը։
Ծերակուտականը ներկայացնելով Արցախի իրավիճակը, յայտնեց, որ Մարտ 24-էն ի վեր ատրպէյճանական բանակը մի քանի անգամ ներխուժած է Արցախի տարածք՝ խախտելով 2020 թուականի նոյեմբերի հրադադարի պայմանագիրը և յստակ դարձնելով Արցախի մէջ ռազմական գործողութիւններու վերսկսման իրենց մտադրութիւնը։

Text Link

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանը խորհրդակցութիւն ունեցաւ խորհրդարանի անդամ Մարք Տալթընի հետ

Մարտ 29-ին, Պրիթիշ Գոլոմպիա նահանգի Pitt Meadows—Maple Ridge ընտրատարածքը ներկայացնող Գանատայի Խորհրդարանի անդամ Մարք Տալթըն Հեռաձայնային զրոյց ունեցաւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի անդամ Վահէ Անտոնեանի հետ։
Երեսփոխան Տալթըն Հայ Դատի յանձնախումբին պաշտօնապէս տեղեկացուց, որ իր թեկնածութիւնը առաջադրած է Գանատայի ընդդիմադիր Պահապանողական կուսակցութեան ղեկավարի պաշտօնին համար։
Հեռախօսազրոյցի ընթացքին արծարծուեցան նաեւ գանատահայ համայնքը շահագրգռող հարցեր։ Վահէ

Անտոնեան զեկուցեց Ատրպէյճանի կողմէ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց սահմանախախտումներուն եւ ռազմական ոտնձգութիւններուն մասին, ինչպէս նաեւ այս առնչութեամբ Գանատայի կառավարութեան պաշտօնական լռութեան մասին։

Text Link

Հայ Դատի Յանձնախումբերը կ'ողջունեն Քէպէգ Նահանգի Կրթութեան Նախարարութեան Հաստատած Ցեղասպանութեան Ուղեցոյցի Մեկնարկը

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը (ANCC) ու Քէպէգի Հայ Դատի յանձնախումբը (ANCQ) կ'ողջունեն Քէպէգ Նահանգի Կրթութեան նախարարութեան կողմէ ձեռնարկուած Ցեղասպանութեան դասաւանդման ծրագրի ուղեցոյցի մեկնարկը:
Կրթական ծրագրի այս ուղեցոյցը մշակուած է Ցեղասպանութեան Կրթական Հիմնադրամի (Genocide Education Foundation) եւ գործակից կազմակերպութիւններու, ինչպէս՝ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին կողմէ, որ Քէպէգ Նահանգի կրթական մշակներուն համար պիտի ծառայէ իբրեւ սկզբնաղբիւր, ուսուցանելու ցեղասպանութիւններու յանցագործութեանց ու անոնց հետեւանքներուն մասին:
«Այս ծրագրի մեկնարկը կարեւոր իրադարձութիւն է Գանատայի Հայ Դատի յանձնախումբին համար, որ վերջին տարիներուն սերտօրէն համագործակցելով Ցեղասպանութեան Կրթական Հիմնադրամին հետ, ձեռնարկեց այս ուղեցոյցը, որ կը միտի Քէպէգ Նահանգի միջնակարգ դպրոցներուն մէջ դասաւանդել հայոց ցեղասպանութեան մասին, իրազեկ դարձնելով ցեղասպանութիւններու դրոյթներուն ու վայրագութեանց մասին», նշեց Ցեղասպանութեան Կրթական Հիմնադրամի գործադիր խորհուրդին մօտ Քէպէքիի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Փրոֆեսոր Լալէ Մանճիկեանը:

Text Link

Հայ դատի Ուրուգվայի հանձնախումբ

Ուրուգվայի խորհրդարանում ոգեկոչվել է Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցը՝ երկրի նախագահ Լուիս Լագաժե Փոուի ներկայությամբ

Ուրուգվայի Խորհրդարանի և ՀՅԴ Հայ դատի Ուրուգվայի հանձնախմբի համակազմակերպմամբ, ապրիլի 26-ին, Ուրուգվայի խորհրդարանում տեղի ունեցավ շուրջ 20 տարի ավանդաբար անցկացվող Հայոց ցեղասպանության ոգեկոչման պաշտոնական միջոցառում: Միջոցառմանը ներկա էին երկրի նախագահ Լուիս Լագաժո Փոուն, փոխնախագահ Բեատրիս Արխիմոնը, խորհրդարանի նախագահ Օբե Բասգեթը, բազմաթիվ նախարարներ,

խորհրդարանականներ, դիվանագետներ, Ուրուգվայի Հայոց թեմի առաջնորդը, հայկական կազմակերպությունների ղեկավարներ և այլոք։
Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի ոգեկոչման օրվա առթիվ ելույթ ունեցան Խորհրդարանի նախագահ Օբե Բասգեթը, Ուրուգվայի փոխնախագահ Բեատրիս Արխիմոնը և ՀՅԴ Հայ դատի Ուրուգվայի հանձնախմբի կողմից՝ Գաբրիելա Մուժուքյանը։ Ներկաներին տեսաուղերձ էր հղել Հայաստան-Ուրորգվայ խորհրդարանական բարեկամության խմբի նախագահ, ՀՀ ԱԺ փոխխոսնակ Իշխան Սաղաթելյանը։
Խորհրդարանի նախագահ Բասգեթը, անդրադառնալով օրեր առաջ Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուի կողմից հայերին ուղղված «գորշ գայլերի» նշանի ցուցադրմանը, խստորեն դատապարտեց այն՝ հայտարարելով. «Մենք այդ ժեստը համարում ենք վիրավորանք ուղղված ոչ միայն հայ համայնքին, այլ նաև Ուրուգվայի ժողովրդին»։

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Armenian National Committee of Australia briefed by Artsakh Foreign Minister and Human Right Defender

Members of the Armenian National Committee of Australia (ANC-AU) Board, Office and Branches held an emergency meeting with the Republic of Artsakh's Foreign Minister H.E. David Babayan and Human Rights Defender Mr. Gegham Stepanyan in light of the extreme humanitarian crisis unfolding in the country as a result of ongoing Azerbaijani terror and war crimes.
The virtual meeting on 31st March 2022 was organised by the ANC-AU, in conjunction with the Permanent Representative to the Republic of Artsakh in Australia, Mr. Kaylar Michaelian.
Babayan and Stepanyan briefed the guests, who included ANC-AU representatives from Sydney, Melbourne and Perth, on Azerbaijan's most Mirecent acts of aggression against the Parukh region, resulting in the evacuation of hundreds of women and children as well, as the disruption of gas pipelines between Armenia and Artsakh, which has suspended vital heating to homes, schools and hospitals to the over 100,000 citizens of Artsakh.

Text Link

Australian Prime Minister Scott Morrison recognises Ottoman massacres of Armenians as one of the greatest crimes of modern history, stops short of calling it Genocide

The Armenian National Committee of Australia (ANC-AU) has received statements from Prime Minister Scott Morrison and Opposition Leader Anthony Albanese on the date marking the 107th anniversary of the Armenian Genocide, in which the leaders of Australia's two major parties go to great extents to describe the actions of the Ottoman Empire in 1915 – using words like "massacres", "deportations", "deaths", "expulsions" and "crimes" – but falling short of characterising these events as "genocide".
Prime Minister Morrison, who in 2021 expanded on previous statements by using the terms "dispossession, deportations and deaths" to describe the experiences of Armenians in 1915, added descriptors like "massacres" and "expulsions" to his 2022 statement, in which he significantly acknowledged "the plight of the Armenian people" as "one of the great crimes of modern history".
"Australians were deeply stirred, and there was an outpouring of material and practical support for the Armenian people," the Prime Minister's statement continued, recognising Australia's first major international humanitarian relief effort to aid survivors of the Armenian Genocide.

Text Link

Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

Կոչ – Հրաւէր համայն Յունահայութեան

Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ ապրող ամբողջ հայութեան համար ճակատագրական այս ժամանակաշրջանին՝ Արցախի պատերազմի ծանր պարտութենէն ու անկէ ետք յամեցող հարցերէն ետք, բայց մանաւանդ վերջին շաբաթներուն Ատրպէյճանի նորանոր սադրանքներու լոյսին տակ, հայրենի եւ սփիւռքի ժողովուրդը աչալուրջ ու պատրաստակամ՝ ոտքի է ու լրջօրէն մտահոգուած, համայն հայութեան իրաւունքներուն ի խնդիր պայքարելու պատրաստակամութեամբ։ Հայոց ցեղասպանութեան յաջորդած տարիներուն, եթէ մեր ամէնէն ազդու կարգախօսները մեր վերապրումին ու Սփիւռքեան պայմաններու մէջ հայապահպանումին վերաբերող լոզունգներն էին, ապա՝ այսօր, 107 տարիներ ետք, կանգնած ենք դարձեալ ճակատագրական պահերու առջեւ, երբ Ցեղասպան Թուրքիան եւ Ատրպէյճանը ցեղասպանական ծրագիրը կը շարունակեն գործադրել հայութեան դէմ։ Ազգովին կը գտնուինք մեր հայրենիքի լինելութիւնը պատուհասող ճգնաժամային կացութեան մէջ։ Հայաստանի եւ Արցախի սահմանները շարունակաբար ենթակայ են ատրպէյճանական մշտական ոտնձգութիւններուն։ Թուրք-ազերիական ճնշումներն ու յարձակողապաշտութիւնը մէկ նպատակ ունին. Արցախը շնչահեղձ պահել եւ հայաթափման մղել։ Աւելին, ընձեռուած որեւէ առիթով՝ շարունակել ցեղասպանական մոլուցքը եւ հայաջնջման ծրագիրը։

Text Link

«Ազգ եւ ազգային փոքրամասնութիւններ. Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութիւնը» գիրքի ներկայացում

Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբի կազմակերպութեամբ, Երկուշաբթի, 4 Ապրիլ 2022-ի երեկոյեան, Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբին մէջ տեղի ունեցաւ լրագրող եւ դոկտորական թեկնածու Ալեքսանտրոս Փիղատասի «Ազգ եւ ազգային փոքրամասնութիւններ. - Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութիւնը» գիրքի ներկայացումը, որ հրատարակուած է «Պացիուլաս » հրատարակչատան կողմէ։ Գիրքի գլխաւոր ներկայացնողը եղաւ Փանտիօ համալսարանի քաղաքական գիտութիւններու դասախօս եւ երեսփոխան պ. Տիմիթրիս Քերիտիս, որ ան եւս դրուատեց հեղինակի աշխատութիւնը, նշելով, թէ այն յատուկ ուսումնասիրութիւն մըն է, ոչ միայն Հայոց ցեղասպանութեան մասին, այլեւ կարեւոր ուղեցոյց մը՝ յոյն եւ պոնտական ժողովուրդներու կրած տառապանքներուն ուսումնասիրութեան ուղղութեամբ։ Ան եւս, յատուկ շեշտ դրաւ թրքական ազգայնականութեան դրսեւորումներուն վրայ, տալով այն պատմական ենթահողը, որուն մէջ Օսմանեան կայսրութիւնը փոխակերպուեցաւ դիւանակալական պետութեան, որուն մէջ ազգայնականութեան գաղափարի ջահակիրները դարձան զինուորական խաւը, Իթթիհատի պարագլուխները եւ թրքական պետական մեքենան։ Խօսողը մանրամասնօրէն անդրադարձաւ այն ծալքերուն, որոնք վերլուծուած են հեղինակին կողմէ եւ կը մատնանշեն Ցեղասպանութեան ծրագրումին ու իրագործման դրդապատճառները։

Text Link

Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբ

Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչում Լոնդոնում

On April 25 the Armenian community of Ealing commemorated the 107 th Anniversary of the Armenian Genocide in Ealing Green and laid flowers at the memorial apricot tree. MPs Rupa Huq and James Murray, leader of Ealing Council Peter Mason and retired MP Stephen Pound each made a tribute. The event was organized by the Armenian Community Council and Ambassador Varuzhan Nersesyan was also present.

Ապրիլի 24-ին Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումը մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման միջոցառմանը, որին ներկա են եղել խորհրդարանականներ Ռուպա Հուքը և Ջեյմս Մուրայը, Լոնդոնի Իլինգ շրջանի խորհրդի անդամ Պետեր Մասոնը և պաշտոնաթող խորհրդարանական Ստեփան Փաունդը։ Միջոցառումը կազմակերպվել էր եղել Մեծ Բրիտանիայի Հայկական համայնքի խորհրդի և դեսպանատան կողմից։
Հայոց ցեղասպանության հիշատակության օրվա առթիվ հայ ժողովրդին տեսաուղերձ է հղել նաև Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ, մեր ժողովրդի մեծ բարեկամ բարոնուհի Քերոլայն Քոքսը։

Հայ դատի Բելգիայի հանձնախումբ

Վանդալիզմ Բրյուսելում

Ապրիլի 26-ին վանդալիզմի էր ենթարկվել Բրյուսելի՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարը։ Այդ առիթով ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի կենտրոնական և Բելգիայի հանձնախմբերը տարածել են համատեղ հայտարարություն՝ Եվրոպական Միության ղեկավարությունից և Բելգիայի կառավարությունից պահանջելով անմիջապես և միանշանակորեն դատապարտել հակահայկական սարսափելի արարքը, անմիջապես կասեցնել թուրքական ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության գործունեությունը, Բելգիայում և ԵՄ ամբողջ տարածքում իրականացնել հետաքննություն՝ բացահայտելու համար թուրքական ծայրահեղական ցանցերը, ինչպես նաև Բելգիայում ընդունել Հայոց ցեղասպանությունը քրեականացնող օրենք։
Հայոց ցեղասպանության հուշարձանի վանդալիզմը լայնորեն քննարկվել է Բելգիայի հասարակական-քաղաքական շրջանակներում։ Ապրիլի 29-ին հանցագործությանն անդրադարձել ու այն կառավարության անունից դատապարտել է Բելգիայի փոխվարչապետը։ Նույն օրը, Բելգիայում Արցախի հետ բարեկամության ֆլամանախոս խմբի անդամները այցելել են Հայոց ցեղասպանության հիշատակի խաչքարի մոտ և հարգանքի տուրք մատուցել ցեղասպանության զոհերին ու անգամ ևս դատապարտել վանդալիզմի դրսևորումը։

Հայ դատի Կիպրոսի հանձնախումբ

Կիպրոսում Արցախի հետ բարեկամության խմբի համալրում

Ապրիլի 27-ին Արցախի բարեկամների Կիպրոսի խմբին է միացել կիպրոսյան բնապահպանական կուսակցության նախագահ, խորհրդարանական Խարալամպոս Թեոպեմբդուն: ՀՅԴ Հայ դատի հանձնախումբը շնորհակալություն հայտնելով խմբի նոր անդամին՝ պատրաստակամություն է հայտնել վերջինիս հետ, Արցախի շահերի պաշտպանության ուղղությամբ, համատեղ աշխատանքներ իրականացել:

Հայ դատի Մերձավոր Արևելքի գրասենյակ

Statement On the occasion of the 107th anniversary of the Armenian genocide

Today we pass by the 40th anniversary of the Armenian genocide committed by the Turks, and the legacy of the criminals is still free and continue the crime. The fact is that crime continues, as well as human rights violations, and the civilized world hides behind the false claims “for welfare and peace” encouraging criminals to continue their crime and forgetting that the minimum required limit lies in describing murder cases with precision and accountability of the countries committed.
Genocide is the biggest crimes against humanity and the Armenian people were and still are victims of this heinous crime.
Azerbaijan, with Turkish military, material and moral support, continue today what Turkey has started in the historical Armenian lands. After ending the Armenian existence in Western Armenia and erasing all the monuments that indicate its historical existence, it focuses on destroying archeological monuments, role of Armenian worship and changing its monuments, and the cultural, historical and religious heritage of the Armenian in Karabakh (Artsakh), which will return to Centuries before the arrival of the Turkish race to the South Caucasus region and Armenian lands. With the aim of blurring the Armenian identity. Even the graves and graveyards were not delivered from the hands of the criminals, these destroyed the stone crosses and dug the graves and all the valuable human civil heritage, amidst applied silence, sad and dangerous by the world and humanity.

Text Link

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Մակ-Ի Ընդհանուր Քարտուղարի Անձնական Ներկայացուցիչին Յղեց Նամակ Մը

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Եռաննա Վրոնեցքային յղեց նամակ մը՝ իր գնահատանքը արտայայտելով ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու խորհուրդի 49-րդ նստաշրջանի ընթացքին 31 մարտին «Ցեղասպանութեան կանխարգիլում»

բանաձեւի որդեգրումին համար:
Բանաձեւը, որ աւանդաբար կը ներկայացուի Հայաստանի կողմէ, գնահատելով ներկայ վտանգներն ու մարտահրաւէրները, կը նախանշէ ցեղասպանութեան կանխարգիլման, ատոր ճանաչման, արդարութեան վերականգնման, փոխհատուցման, մեղաւորները պատժելու եւ հաշուետուութիւն ապահովելու համար այն քայլերը, որոնք պէտք է միասնականօրէն իրականացուին ՄԱԿ-ի անդամ երկիրներուն կողմէ:

Text Link

Լիբանանի Հայ Դատի Մարմինը Հանդիպում Ունեցաւ Լիբանանի Մէջ Մեքսիքայի Դեսպանին Հետ

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Վահրամ Էմմիեան, Քրիս Ժապպուր, Քրիսթին Արզումանեան-Ղազարեան եւ Եղիա Թաշճեան, երէկ այցելեց Լիբանանի մէջ Մեքսիքայի դեսպանատուն, ուր հանդիպում ունեցաւ դեսպան Խոզէ-Իկնասիո Մատրազոյի հետ՝ ներկայութեամբ դեսպանատան առաջին քարտուղար Օսքար Քարվախալ Ակուիրէի:
Հայ դատի մարմինը դեսպանին ներկայացուց 44-օրեայ պատերազմէն ետք Արցախի Հանրապետութեան մէջ ստեղծուած կացութիւնը, մասնաւորաբար ազրպէյճանական կողմի Արցախի կազի մատակարարումը խափանելուն պատճառով կլիմայական վատ պայմաններու մէջ ստեղծուած մարդասիրական ծանր կացութիւնը: Հայ դատի մարմինը նաեւ մտահոգութիւն յայտնեց ազրպէյճանական զինեալ ուժերուն կողմէ գործուող մշակութային ցեղասպանութեան եւ վերջերս Խրամորթի եւ Քարագլուխի շրջաններուն մէջ անոնց յառաջխաղացման նկատմամբ:

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Այցելեց Ռայի Պատրիարքին

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը շաբաթ, 23 ապրիլին այցելեց Պքերքէ, ուր Հայոց ցեղասպանութեան 107-ամեակի ոգեկոչման ծիրին մէջ ծաղկեպսակ մը զետեղեց Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած խաչքարին՝ ներկայութեամբ հայ կաթողիկէ համայնքի Պէյրութի թեմի օգնական եպիսկոպոս Գէորգ Ասատուրեանի եւ մարոնիներու պատրիարքի տեղակալ Պուլոս Սայեահ եպիսկոպոսին:
Խաչքարը Պքերքէի շրջափակին մէջ զետեղուած էր 2015 թուականին՝ հովանաւորութեամբ մարոնիներու Ռայի պատրիարքին:
Գերապայծառ Ասատուրեանի եւ Սայեահ եպիսկոպոսի կողմէ հայերէն ու արաբերէն աղօթքներէ ետք, Գէորգ եպս. Ասատուրեան արտասանեց սրտի խօսք մը՝ անդրադառնալով նահատակութեան, նահատակները յիշելու, անոնց յիշատակը յարգելու եւ Պքերքէի ներկայացուցած կարեւորութեան, որմէ ետք Սայեահ եպիսկոպոսը իր կարգին արտասանեց սրտի խօսք մը՝ յայտնելով. «Հայ ժողովուրդին յատկութիւններէն մէկը այն է, որ չի մոռնար իր պատմութիւնը»:

Text Link

Պէյրութի Ամերիկեան Դեսպանատունը Եւս Կ՛արձագանգէ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան դիմատետրեան էջին վրայ երէկ տեղ յատկացուեցաւ Հայոց ցեղասպանութեան 107-ամեակի անդրադարձին:
Պէյրութի ամերիկեան դեսպանատան կողմէ կայքին վրայ տեղադրուեցան Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիայի գրառումն ու լուսանկարները՝ եւ ձեռքերուն մէջ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի խորհրդանիշ անմոռուկը:
Շիայի կողմէ Հայոց ցեղասպանութեան նշումին արձագանգումը եղաւ հետեւեալ գրառումով. «107 տարի առաջ, 24 ապրիլ 1915-ին, օսմանեան իշխանութիւնները Պոլսոյ մէջ սկսան ձերբակալել հայ մտաւորականներն ու ղեկավարները: Մէկ տարուան ընթացքին օսմանեան իշխանութիւնները բռնագաղթի ենթարկեցին հայ բնակչութիւնը եւ սպաննեցին մէկուկէս միլիոն հայեր: Այդ սպանդը Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտընի կողմէ կոչուեցաւ հաւաքական ցեղասպանութիւն… Հայոց ողբերգական պատմութիւնը յիշելով հանդերձ, մենք կ՛ողջունենք նաեւ անոնց ունեցած ներդրումը՝ ո՛չ միայն մեր զոյգ երկիրներուն մէջ, այլ նաեւ որեւէ տեղ, ուր հայկական սփիւռք գոյութիւն ունի»:

Text Link

Հայ դատի Եգիպտոսի հանձնախումբ

Եգիպտահայ համայնքի նուիրեալ գործիչներէն՝ Տօքթ. Արմէն Մազլումեան մասնակից դարձաւ Նախագահ Սիսիի հովանաւորած գիտաժողովին

Օրերս, բարձր հովանաւորութեամբ Եգիպտոսի հանրապետութեան նախագահ՝ Ապտըլ Ֆաթթահ Ալ Սիսիի, Գահիրէի մէջ տեղի ունեցաւ ահաբեկչութեան դէմ պայքարի առանցքներուն մասին յատկացուած գիտաժողով մը:
Գիտաժողովը կազմակերպուած էր Եգիպտոսի Ընկերային միասնութեան նախարարութեան ինչպէս նաեւ Եգիպտոսի Մտքի եւ Ռազմավարական ուսումնասիրութեանց կեդրոնի կողմէ:
Գիտաժողովին ներկայ էին Եգիպտոսի Ընկերային միասնութեան նախարար՝ դոկտ. Նիվին Ալ Քապպաժ, նաեւ Մտքի Եւ Ռազմավարական ուսումնասիրութեանց կեդրոնի տնօրէն՝ դոկտ. Խալէտ Ուքաշա:
Սոյն կարեւոր ժողովին նաեւ ներկայ եղած է Եգիպտոսի հայկական համայնքի յարգուած անդամներէն, եւ տեղի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ՝ տոքթ. Արմէն Մազլումեան:

Text Link

Եգիպտական «Մաաթ» հիմնադրամի ղեկավարը միջազգային հանրությանը կոչ է անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Եգիպտական «Մաաթ» հիմնադրամի ղեկավար Այման Օքեիլը միջազգային հանրությանը կոչ է անում փաստահավաք խումբ ձևավորել և ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այման Օքեիլն այդ մասին ասել է «Արմենպրես»-ին տրամադրած տեսաուղերձում:
«Հայոց ցեղասպանությունից 107 տարի անց դեռևս չկա միջազգային կոնսենսուս՝ճանաչելու այս հանցագործությունը, որի մեղավորները մինչ օրս չեն պատժվել, թեև համաձայն Ցեղասպանության կոնվենցիայի III հոդվածի (բ) և (գ) կետերի՝ տեղի է ունեցել հայ ժողովրդի ցեղասպանություն: Այն, ինչ հիմա կատարվում է Ղարաբաղում, նույնպես կարելի է որակել որպես ցեղասպանության հանցագործություն, քանի որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչ այժմ Ադրբեջանը խախտում է միջազգային մարդասիրական իրավունք:

Text Link

Հայ դատի Սիրիայի հանձնախումբ

Սուրիոյ Հայ դատի յանձնախումբը մասնակցեցաւ Ազգ. միացեալ վարժարանի ապրիլեան ձեռնարկին

Մեր աշակերտները հայ ժողովուրդի պատմութեան, Պահանջատիրութեան եւ հայ Դատին իրազեկ դարձնելու համար, Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբը իր մասնակցութիւնը բերաւ Ազգային Միացեալ վարժարանի Հայոց Ցեղասպանութեան 107-րդ տարելիցին նուիրուած ձեռնարկին:
Յանձնախումբի անդամ Աւօ Գույումճեան ներկայացուց Նեմեսիս գործունէութիւնը: Ան մանրամասնօրէն խօսեցաւ գործունէութեան փուլերուն մասին: Իսկ Կարօ Եղիայեան ներկայացուց Հայ Դատի գրասենեակներն ու անոնց մեծածաւալ աշխատանքը:
Զոյգ դասախօսութիւններուն աշակերտները հետեւեցան հետաքրքրութեամբ:
Աւարտին, Սուրիոյ Հայ Դատի Յնձխ.-ի խօսքը ուղղեց ատենապետ Ծերուն Գահուէճեան:Ան նախ շնորհակալութիւն յայտնեց վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին՝ իրենց առաջարկին ընդառաջելու համար, ապա անդրադարձաւ հայերէնի պահպանման ու ճշգրտութեամբ օգտագործման կարեւորութեան:

Text Link

«Հայ Դատն ու հայ երիտասարդութիւնը» խորագիրով խորհրդաժողով

Կազմակերպութեամբ Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբին, Ուրբաթ, 29 Ապրիլին տեղի ունեցաւ «Հայ Դատն ու Հայ Երիտասարդը» խորագիրով խորհրդաժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հալէպահայ 15 միութիւններ եւ կազմակերպութիւններ:
Խորհրդաժողովը կ՚ընդգրկէր հետեւեալ

չորս զեկոյցները՝
ա-Հայ Դատ. «Սահմանում, Պահանջատիրութիւն, Գրասենեակներ եւ Անոնց Գործունէութիւնը»:Զեկուցաբեր՝ ՀՅԴ Բիւրոյի անդամ, Բիւրոյի Հայ Դատի եւ Քաղաքական Հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեան:
բ-«Հայ Դատն ու Միջազգային Օրէնքը»:Զեկուցաբեր՝ իրաւաբան, միջազգային օրէնքի մասնագէտ, Արդարութեան եւ Մարդկային Իրաւանց Հայկական Իրաւական կեդրոնի տնօրէն Խորհուրդի անդամ՝ դոկտ. Գէորգ Յակոբճեան:
գ- «ՁԼՄ-ներուն Դերը Հայ Դատի Աշխատանքներուն Մէջ»:Զեկուցաբեր՝ ՀՅԴ-ի անդամ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, «Երկիր Մեդիա» պատկերասփիւռային ընկերութեան լրատուական եւ հասարակական-քաղաքական հաղորդումներու նախկին տնօրէն՝ Գեղամ Մանուկեան:
դ-«Հալէպահայ Միութիւններու Դերակատարութիւնը Հայ Դատի Աշխատանքներուն մէջ»:Զեկուցաբեր՝ հրապարակագիր, Հալէպի Հայագիտական Հիմնարկի «Հայ Դատ» նիւթի դասախօս՝ Աւօ Գաթրճեան։
Ապա հալէպահայ միութիւններն ու կազմակերպութիւնները ներկայացուցին զեկոյցներ Հայ Դատին գծով իրենց տարած աշխատանքին մասին։Խօսուեցաւ Հայ Դատի աշխատանքներուն մէջ միութիւններուն, երիտասարդութեան եւ լրատուամիջոցներու դերին շուրջ։
Տեղի ունեցան քննարկումներ եւ ներկայացուեցան առաջարկներ։

Text Link

Հայ դատի Իրաքի հանձնախումբ

Իրաքի Հայ դատի մարմինը այցելեց Վեհափառ Հայրապետին

Երեքշաբթի, 12 Ապրիլ 2022-ին, Իրաքի հայ դատի մարմինը, ընկերակցութեամբ Լիբանանի հայ դատի մարմինին, այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:
Իրաքի հայ դատի մարմինը ամփոփ գիծերով Վեհափառ Հայրապետին ներկայացուց իր աշխատանքները։ Ապա, Նորին Ս. Օծութիւնը իր մտածումները պարզեց եւ թելադրութիւնները կատարեց իսլամական աշխարհին մէջ հայ դատի աշխատանքները աւելի ազդու կերպով կազմակերպելու գծով, յատկապէս նկատի ունենալով միջավայրին առնչուած քաղաքական ու կրօնական մօտեցումներն ու զգայնութիւնները:
Այս առիթով Վեհափառ Հայրապետը գնահատեց թէ՛ իսլամական աշխարհին մէջ եւ թէ՛ ընդհանրապէս հայ դատի մարմիններուն կատարած աշխատանքը մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն հետապնդման ուղղութեամբ:

Text Link